Հովհաննես Թումանյան

Ախթամար

Ծիծաղախիտ Վանա ծովի
Փոքրիկ գյուղից առափնյա,
Ծովն է մընտնում գաղտագողի
Ամեն գիշեր մի տըղա:

Ծովն է մընտնում առանց նավակ,
Բազուկներով առնացի
Ջուրը ճողփում, լող է տալի
Դեպի կըղզին դիմացի:

Խավար կըղզուց պարզ ու պայծառ

Մի լույս կանչում է նըրան,
Մի վառ փարոս նըրա համար,
Չըմոլորի իր ճամփան:

Սիրուն Թամարն ամեն գիշեր
Այնտեղ կըրակ է անում,

Եվ ըսպասում է անհամբեր
Այնտեղ՝ մոտիկ դարանում:

Ծրփում է ծովն ալեծածան,
Ծրփում է սիրտը տրղի.
Գոռում է ծովն ահեղաձայն,

Նա կրռվում է կատաղի:

Եվ Թամարը սրրտատրրոփ
Արդեն լրսում է մոտիկ
Ջրրի ճողփյուն, ու ողջ մարմնով
Սիրուց այրվում է սաստիկ:

Լրռեց: Ծովի խավար ափին
Կանգնեց սև-սև մի ըստվեր...
Ահա և նա... իրար գրտան...
Կասկածավո՞ր լուռ գիշեր...

Միայն ալիքը Վանա ծովի

Մեղմ դիպչում են եզերքին.
Եվ հեղհեղուկ հեռանում են
Շրշունջներով անմեկին:

Ներրանք ասես փրսփրսում են...
Ու աստղերը կամարից

Ակնարկելով բամբասում են
Լիրբ, անամոթ Թամարից...

Բամբասում են կուսի սրրտում...
Ժամ է արդեն... ու կրրկին
Մինն ալեկոծ ծովն է մրտնում,

Մյուսն աղոթում եզերքին...

Բայց մի անգամ չարկամ մարդիկ
Նրրանց գաղտնիքն իմացան,
Լույսը հանգցրին սև ու սաստիկ
Մի մութ գիշեր դիվական:

Մոլորվեցավ խավար ծովում
Լողորդ տղան սիրահար,
Ու բերում է հողմը, բերո՜ւմ
Հառաչանքներն— «Ա՜խ, Թամա՜ր...»:

Մոտ է ձայնը. սև խավարում,

Ժայռերի տակ սեպացած,
Ուր ամեհի ծովն է գոռում,
Մերթ կորչում է խլացած,
Ու մերթ լրսվում ուժասպառ.
«Ա՜խ, Թամա՜ր...»:

Առավոտյան ծովը ծրփաց,
Ափը ձրգեց մի դիակ,
Նրրա շուրթին, պաղ, կարկամած,
Ասես մեռած ժամանակ
Սառել էին երկու բառ.

«Ա՜խ, Թամա՜ր...»:

Այն օրվանից սրրա համար
Կրոգին կոչվեց Ախթամար: